Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 9-ի նյութական իրավունքի բաժնի 35"45-րդ, 33"61-րդ 28"55-րդ, 20"42-րդ, 19"10-րդ, 5"9-րդ, 2"41-րդ, 34"31-րդ հարցերը:

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

61-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից չեն բերվել բավարար հիմնավորումներ, ուղեցույցում նշված պատասխանից շեղվող պատասխանը ճիշտ համարելու համար, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

55-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն առ այն, որ առկա է չհաջողված հանցակցության երկու տեսակ, ընդունելի է: Հետևաբար, հաշվի առնելով, որ մեջբերված իրավադրույթների և եզրահանգումների համատեքստում ընտրված տարբերակը ճիշտ է, ուստի տրվում է 1 միավոր:*

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ծանր վնաս պատճառելը ավազակության*

առանձնապես ծանրացնող հանգամանք է, իսկ քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններից ելնելով ծանրացնող /զենքի գործադրմամբ/ և առանձնապես ծանրացնող հանգամանքների մրցակցության պայմաններում արարքը չէր կարող որակվել ծանրացնող հանգամանքով, ուստի գնահատականը չի բարձրացվում:

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի հավակնորդին տրվում է 1 միավոր:*

41-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում քրեական օրենքի տրամաբանությունից, քանզի հափշտակության կատարումն այլ անձի ներկայությամբ /բացառությամբ հանցակիցների/ այն պայմաններում, երբ հանցավորը գիտակցել է, որ այդ անձը ընկալում է իր կողմից կատարվող արարքի բնույթը, չի կարող գնահատվել գաղտնիության պայմաններում կատարված, ընդ որում որևէ նշանակություն չունի այդ անձը սեփականատերն է, թե՝ մեկ ուրիշը, հետևաբար հավակնորդի հիմնավորումը ընդունելի չէ, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

31-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից: Առկա չէ որևէ տվյալ քրեական պատասխանատվության մասին: Միևնույն ժամանակ հավակնորդը Գ-ի և Դ-ի արարքները չի քննարկել կաշառք ստանալու և տալու համատեքստում, այն պայմաններում, երբ կաշառքի առարկա կարող են լինել նաև ոչ նյութական առավելությունը, այդ թվում՝ սեքսուալ բնույթի ծառայությունները, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***1970*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 21 միավորը բարձրացնել 4 միավոր՝ արդյունքում արձանագրել 25 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ